

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Աշխարհագրական նշումներ

Գրանցման համարը 13.1

Գրանցման թվականը 29.07.2025

Գործողության ժամկետը 01.04.2035

Հայտի համարը 2025001

Հայտի ներկայացման թվականը 01.04.2025

Հայտատուն (հայտատուները) ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

Ծագման երկիրը AM

Աշխարհագրական նշումը ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՋՈՒԽ

АРМЯНСКИЙ СУДЖУХ

ARMENIAN SUJUKH

ԱԾՄԴ 29

Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը Սուջուխ

Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝

Հայկական սուջուխը տավարի մսից և ճարպից պատրաստված հում չորացված մսամթերք է, որի պատրաստման համար հայերը դարավոր կուտակված փորձ ունեն։ Տարիների ընթացքում այդ փորձը փոխանցվել է սերնդեսերունդ և կատարելագործվել՝ ապահովելով հայկական սուջուխի համային և որակական հատկությունների կատարելագործումը։ Հայկական սուջուխը տարբերվում է մնացած ազգերի կողմից պատրաստված մթերքից նրանով, որ հայերը օգտագործում են տավարի միս և տավարի ճարպ։ Որպես համեմունք միայն հայերն են օգտագործում քիմիոնը, որը համարվում է հայկական ծագման խոտաբույս։ Բառացի մթերքի անվանումը թարգմանվում է որպես լցոնած, նկատի ունենալով, որ կտրտված մսային հումքը լցվում է տավարի աղիների մեջ։ Այդ իսկ պատճառով մշակվեց մսային հումքի աղադրման և չորացման եղանակ, համաձայն որի միսը լցնում էին տավարի աղիների մեջ։

Կապն աշխարհագրական ծագման հետ՝

Սուջուխի բնորոշ առանձնահատկությունները պայմանավորված են Հայաստանում բուծվող Կովկասյան գորշ տավարի կաթնամսատու ցեղատեսակի մսի առանձնահատկությամբ, որը սուջուխին տալիս է յուրահատուկ համ և որակ։ Մսատու տավարի մթերատվության վրա ազդում են միջավայրային տարբեր գործոններ, ինչպիսիք են՝ օդի ջերմաստիճանը, հարաբերական խոնավությունը, արեգակնային ճառագայթումը, կերակրման ռեժիմը և հաճախականությունը։ Լեռնային արոտավայրերում թարմ և աէրոիոններով հարուստ օդը, կենդանիների ազատ տեղաշարժը, տեղանքի բարձրությունը հնարավորություն են տալիս ստանալու ավելի բարձր մթերատվություն և լավորակ մսային հումք։ Նման պայմաններում պահված տավարի միսն ունի լավ զարգացած մկանային հյուսվածք, բարձր ջրակլանման հատկություններ, կախված կենդանու տարիքից՝ լավ արտահայտված համ և հոտ, բարձր կաչողականություն։

Աշխարհագրական գոտին՝ Հայաստանի Հանրապետություն